ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.08.2015թ
257-9-ի

ՀՀ արդարադատության նախարարի
պաշտոնակատար
պարոն Արսեն Մկրտչյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մկրտչյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի յոթերորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. Համաձայն Գործողությունների ծրագրի յոթերորդ հանձնառության՝ 2014թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ի՞նչ կոնկրետ քայլեր են արվել ուսումնասիրելու աշխատակարգերը և միջազգային փորձը: Կոնկրետ ի՞նչ փաստաթղթեր են ուսումնասիրվել: Խնդրում ենք ներկայացնել ցանկը:
2. Ե՞րբ են մշակվել իրավական ակտերի/օրինակելի աշխատակարգի փոփոխությունների առաջակները:
3. Քանի՞ հանրային քննարկում է իրականացվել և ե՞րբ, արդյոք հավաքագրվե՞լ են նոր առաջարկներ: Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել ստացված առաջարկների ամփոփաթերթը:
4. Որտե՞ղ է հրապարակվել լրամշակված փաթեթը:
5. Ե՞րբ է այն ներկայացվելու Կառավարության հաստատմանը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ